Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին (այսուհետ՝ ՀԱԱՀ) սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական կենդանիների (այսուհետ՝ Գույք) օտարման օրինակելի (նվազագույն) պայմանները:

2. Օտարման ենթակա Գույքի առկայության դեպքում տվյալ գույքի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն այդ գույքի օտարման անհրաժեշտության մասին գրավոր կերպով հայտնում է ռեկտորին:

3. Վաճառքի եղանակով գույքի օտարումն իրականացվում է մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կամ աճուրդի (այսուհետ՝ Աճուրդ) միջոցով: Մրցույթի կամ Աճուրդի անցկացման համար ռեկտորի հրամանով ստեղծվում է առնվազն 3 հոգուց բաղկացած հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որն իրականացնում է Մրցույթի կամ Աճուրդի կազմակերպչական աշխատանքները՝ Կարգով նախատեսված պայմաններով: Օտարման եղանակի նպատակահարմարությունը որոշում է Հանձնաժողովը:

4. Մրցույթի կամ Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կատարվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

5. Մրցույթը համարվում է չկայացած, եթե ոչ մի հայտ չի ներկայացվել կամ ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանել Կարգով նախատեսված՝ հայտի պահանջներին: Աճուրդը համարվում է չկայացած, եթե որևէ մասնակից չի ներկայացել, իսկ կոնկրետ լոտերի մասով՝ եթե դրանք չեն վաճառվել արդյունքում: Նման դեպքերում անցկացվում է կրկնակի Մրցույթ կամ Աճուրդ՝ ոչ ավելի, քան ևս երկու անգամ:

6. Այն դեպքում երբ Մրցույթի կամ Աճուրդի (այդ թվում՝ կրկնաճուրդի) արդյունքում տվյալ Գույքը չի վաճառվում, ապա Հանձնաժողովն իրավասու է կայացնելու Գույքն ուղղակի ձևով օտարելու (վաճառելու) որոշում:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

7. Հանձնաժողովը՝
ա) իրականացնում է Մրցույթի կամ Աճուրդի կազմակերպչական աշխատանքները՝ առաջնորդվելով ՀԱԱՀ կանոնադրությունով, Կարգով և, անհրաժեշտության դեպքում, այլ ակտերով,
բ) սահմանում է Մրցույթի կամ Աճուրդի անցկացման ժամկետները, վայրը, ձևը և պատասխանատու ստորաբաժանումները,
գ) հաստատում է Մրցույթի կամ Աճուրդի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է հայտերը, ինչպես նաև որոշում է Մրցույթի կամ Աճուրդի հաղթողին,
դ) սահմանում է Մրցույթի կամ Աճուրդի մասնակցության վճարի չափը, այն վճարելու կարգը, վճարն ընդունող պատասխանատու ստորաբաժանումը,
ե) սահմանում է օտարման ենթակա Գույքը Մրցույթի կամ Աճուրդի մասնակիցների կողմից ուսումնասիրելու կարգն ու պայմանները,
զ) Մրցույթի հայտերն ամփոփելու օրը կամ Աճուրդի անցկացումից հետո կազմում է արձանագրություն,
է)Մրցույթի դեպքում որոշում է վիճակահանության անցկացման կարգը՝ միաժամանակ մի քանի մասնակիցների կողմից հավասար գնային հայտ ներկայացրած լինելու դեպքում,
ը) իրականացնում է այլ գործառույթներ՝ Կարգի նպատակին հասնելու համար:

8. Գույքի մեկնարկային գնի որոշման նպատակով հանձնաժողովն իրականացնում է Գույքի գնահատում՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով ՀԱԱՀ մասնագետների:

9. Մրցույթի և Աճուրդի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ուսումնասիրելու օտարման ենթակա Գույքը՝ Հանձնաժողովի կողմից որոշված կարգով: Վերջինիս կարող են տրամադրվել նաև լրացուցիչ տեղեկություններ: Առանձին դեպքերում Գույքի փոխարեն կարող են ներկայացվել դրա լուսանկարները կամ նկարագրությունները:

10. Օտարման ենթակա Գույքի որակի և պիտանելիության վերաբերյալ երաշխիքներ չեն սահմանվում և վաճառքից հետո պահանջներ չեն ընդունվում:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

11. Մրցույթին կամ Աճուրդին կարող է մասնակցել յուրաքանչյուր անձ՝ Կարգով սահմանված պահանջներին համապատասխան Մրցույթի հայտը կամ Աճուրդի մասնակցության վճարը հավաստող փաստաթուղթը համապատասխան ստորաբաժանման ներկայացնելու միջոցով:

12. Մրցույթին կամ Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, հրապարակային ծանուցման մեջ սահմանված չափով, մուծում են մասնակցության վճար, որի չափը որոշում է Հանձնաժողովը:

13. Հաղթող մասնակցի կողմից վճարված մասնակցության վճարը, գործարքի կնքման արդյունքում, հաշվանցվում է վաճառքի գնից: Այն դեպքում, երբ հաղթող մասնակիցը չի կնքում գործարքը (հրաժարվում է հետագա վճարումները կատարելուց կամ չի ներկայանում համապատասխան ձևակերպումներն անելու համար կամ ուղղակի կամ անուղղակի այլ եղանակով խուսափում է գործարքի կնքումից, այդ թվում՝ չի ապահովում պահանջվող փաստաթղթեր), ապա հաղթող մասնակցին մասնակցության վճարը չի վերադարձվում: Մրցույթին կամ Աճուրդին մասնակցած, սակայն հաղթող չճանաչված մասնակցին մասնակցության վճարը վերադարձվում է՝ վերջինիս կողմից իր բանկային հաշվի տվյալները ներկայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված և ստորագրված ծրարով:

15. Մրցույթի հայտում ներառվող կամ Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ և հրապարակվում ծանուցմամբ (հայտարարությամբ):

16. Մրցույթի հայտը կամ Աճուրդի մասնակցությունը գրանցվում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման (ներկայանալու) հերթականության՝ նշելով առնվազն գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը:

17. Մասնակցին տրվում է տեղեկանք՝ Մրցույթի հայտն ընդունելու մասին, դրա համար պատասխանատու անձի ստորագրությամբ: Աճուրդի մասնակցին տրվում է մասնակցության քարտ՝ հերթական համարով:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ.

18. Մրցույթի հայտերը բացվում են Մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, Հանձնաժողովի նիստում:

19. Հանձնաժողովն ամեն ծրարը բացելիս ստուգում է ներկայացված հայտի համապատասխանությունը հրապարակային ծանուցման պահանջներին:

20. Մրցույթի հայտ ներկայացրած մասնակիցները կարող են ներկա գտնվել նիստին:

21. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

22. Եթե երկու և ավելի մասնակից գնային հայտը ներկայացրել են հավասար չափով, ապա հաղթողը որոշվում է վիճակահանությամբ, որի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Հանձնաժողովը:

23. Մրցույթի հաղթողին որոշելուց հետո Հանձնաժողովի կողմից կազմվում է արձանագրություն: Արձանագրությունը ստորագրվում է նաև հաղթող ճանաչված անձի կողմից, վերջինիս՝ Մրցույթին ներկա գտնվելու դեպքում:

24. Մրցույթին ներկա չգտնվելու դեպքում հաղթողը պարտավորվում է ձեռքբերված գույքի ամբողջ գինը վճարել և գործարքի կնքման համար ներկայանալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո՝ դրանում սահմանված կարգով և ժամկետում:

25. Եթե սահմանված կարգով և ժամկետներում Մրցույթի հաղթողը չի վճարում գույքի գինը, ապա նա զրկվում է գույք ձեռք բերելու իրավունքից, և Մրցույթի հաղթող կարող է ճանաչվել նախորդ ավելի բարձր գին առաջարկած մասնակիցը:

26. Այն դեպքում, երբ գործարքի կնքման համար պարտադիր է նոտարական վավերացումը և/կամ պետական գրանցումը (հաշվառումը) կամ նման պահանջ ներկայացնում է Մրցույթում հաղթող ճանաչված անձը, ապա նշված ծախսերը կատարվում են վերջինիս կողմից և նրա հաշվին:

V. ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.

27. Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, մասնակցության վճարը հաստատող անդորագիրը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտեր:

28. Նախքան աճուրդի բացումը մասնակիցներին հնարավորություն է տրվում ծանոթանալու վաճառվելիք լոտ(եր)ին:

29. Աճուրդը սկսվում է հայտարարված ժամին: Աճուրդավարը հրապարակում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը:

30. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր քարտը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

31. Յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել առնվազն մեկ քայլով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով քարտը:

32. Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու պահից:

33. Այն դեպքում, երբ հայտարարված գնով լոտը ձեռք բերելու առաջարկ չի լինում, աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը: Լոտի մեկնարկային գնի երեք անգամ հայտարարելու դեպքում գնորդների բացակայության պարագայում տվյալ լոտի աճուրդը համարվում է չկայացած:

34. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

35. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշման կարգն ու պայմանները որոշում է Հանձնաժողովը:

36. Աճուրդի յուրաքանչյուր լոտի հաղթողին որոշելուց հետո համապատասխան նշում է կատարվում Հանձնաժողովի կողմից կազմվող արձանագրության մեջ: Արձանագրությունը ստորագրվում է նաև հաղթող ճանաչված անձանց կողմից:

37. Եթե սահմանված կարգով և ժամկետներում Աճուրդի հաղթողը չի վճարում Գույքի գինը, ապա նա զրկվում է Գույք ձեռք բերելու իրավունքից, իսկ վճարված մասնակցության վճարը չի վերադարձվում: Չվաճառված լոտ(եր)ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ:

38. Այն դեպքում, երբ գործարքի կնքման համար պարտադիր է նոտարական վավերացումը և/կամ պետական գրանցումը (հաշվառումը) կամ այլ նման պահանջ, ապա նշված ծախսերը կատարվում են հաղթողի կողմից և նրա հաշվին:

39. Սահմանված ժամկետում Գույքը չտեղափոխելու դեպքում, ՀԱԱՀ-ը Գույքի խնամքի հետագա պարտավորություն չի ստանձնում և իրավասու է ձեռք բերողից պահանջելու կատարված ծախսերի ու կրած վնասների փոխհատուցում: